



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2015թվականի N-04-Ա

**ՄԱՐԶԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի <Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ *Սարչապետի գյուղական համայնքի ավագանին որոշում է.*





1. Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Սարչապետի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0119-0066 ծածկագրից 0.008 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը, հեռուստատեսության արդիականացման ծրագրի շրջանակներում, թվային հեռուստաաշտարակ կառուցելու նպատակով, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության, կապի հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխման վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ -4

Դեմ -0

Ձեռնպահ -0

- 1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱԶԱՊԵՏ 
- 2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻՄ 
- 3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ 
- 4. ԴԱՎԹՅԱՆ ՀԵՍԼԵՏ 



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ